

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Տիգրան Արմանի Մուղնեցյան «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Արևելյան գործընկերության (ԱԳ) երկրները, անցնելով ԽՍՀՄ փլուզման և ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով առաջացած լուրջ դժվարությունների միջով, ձևավորեցին իրենց պետականությունները՝ ընդունելով իրենց Սահմանադրությունները: Այդ երկրներն այդպիսով թևակոխեցին բեկումնային փոփոխությունների և արդիականացման շրջափուլ, որի անբաժանելի մասն են կազմում ժողովրդավարական քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության կայացման նախադրյալները: Այս առումով, ժամանակակից համեմատական քաղաքագիտությունը վերլուծում է քաղաքական արդիականացման գործընթացների արդյունքում առաջացած նոր հիմնախնդիրները, որովհետև անհրաժեշտություն առաջացավ. 1) որոշել տվյալ երկրի իրականությանը համապատասխանող ժողովրդավարության քաղաքական համակարգի մոդելը, 2) ըմբռնել տեսական և գործնական նշանակությունը տվյալ երկրի ներկայի և ապագայի համար այնպիսի ժողովրդավարական ինստիտուտների, ինչպիսիք են հանրային իշխանության մարմինները, կուսակցությունները և ԲՀԿ-ները, 3) քաղաքագիտական մոտեցումներով մշակել ընտրությունների ազգային հայեցակարգը՝ որպես քաղաքական ժողովրդավարության ինստիտուտ, 4) առաջադրել չափորոշիչներ տվյալ երկրի ընտրողների տիպաբանության համար՝ կատարելագործելով ընտրությունների կազմակերպման և անցկացման մեխանիզմները, 5) որոշել տվյալ երկրի իրականությանը համապատասխանող ժողովրդավարության քաղաքական համակարգի մոդելը:

Քաղաքական ընտրություններն առաջին հերթին կապված են հասարակության համակարգում հանրային իշխանության բաշխման և վերաբաշխման, պետության վրա ազդեցության, նրա քաղաքականության, պետական իշխանության ձևավորման հետ: Ընտրությունները՝ որպես քաղաքական երևույթ, ունեն հետազոտական խնդիրների իրենց առանձնահատուկ շրջանակը: Խոսքն առաջին հերթին ընտրությունների մասին է՝ որպես քաղաքական ժողովրդավարության ինստիտուտ անցումային և փոխակերպվող ԱԳ երկրների հասարակություններում: Այս խնդրի քաղաքագիտական լուծումը կարևոր է ԱԳ

երկրներում ժողովրդավարության ինստիտուտի ձևավորման համար՝ իր լայն իմաստով:

Ընտրությունները՝ որպես քաղաքական երևույթ, արդիական են դրանք ընկալելու համար որպես ընտրողների ընտրական վարքագծի քաղաքացիական, իրավական, սոցիալ-մշակութային ու գաղափարական գործոններ: ԱլԳ երկրներում ընտրություններն անցկացվում են տարբեր մակարդակներով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, ընտրությունների սկզբունքների դրսևորման ինքնատիպությունը տարածաշրջանային քաղաքական կյանքի համատեքստում:

Ներկայացված աշխատանքում հեղինակն ուսումնասիրել է հետևյալ հիմնահարցերը՝ ընտրությունների տեղը ժողովրդավարության և քաղաքական ռեժիմների փոփոխության տեսամեթոդական ընկալումներում, ինչպես նաև ընտրական համակարգի տիպաբանությունը, կառուցվածքն ու ազդեցության առանձնահատկությունները հետխորհրդային տարածությունում: Այս համատեքստում հեղինակն ուշադրություն է դարձրել Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի ընտրական համակարգերին ու դրանց ազդեցությանը քաղաքական ինստիտուտների վրա՝ դիտարկելով նշված երկրների ընտրական համակարգերի համեմատական վերլուծության հիմնախնդիրները:

Սույն աշխատանքի ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Իսկ թեկնածուական ատենախոսության եզրակացությունում հեղինակը շարադրել է իրականացված վերլուծության հիմնական արդյունքները:

Հիմնվելով վերոհիշյալ մոտեցումների և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների վրա՝ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը՝ ատենախոսության հիմնախնդրի գիտական մշակվածության մեջ, ներառեր նաև հետևյալ աշխատությունները՝ 1) *Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները. ԺՄԻ համեմատական վերլուծություն* (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ. Ա. Ալեքսանյան: Եր., ԵՊՀ հրատ., 2019, 2) *Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում* (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ. Ա. Ալեքսանյան: Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 3) *Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համարեքստում* (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ. Ա. Ալեքսանյան: Եր., ԵՊՀ հրատ., 2016:

